ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2015, 8 – Լ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 1–Լ ՈՐՈՇՄԱՆ, ԴՐԱ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ, 2-Լ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ, 3-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի թիվ ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված <<Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի>> 5-րդ կետի 1-ին և 6-րդ ենթակետերով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովը *որոշում է.*

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝

Հանձնաժողով) 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 1-Լ որոշման 1-ին կետի 1.2. ենթակետում «*փաստաբանի,*» բառից հետո լրացնել «*Հայաստանի Հանրապետության*» բառերը:

2. Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 1-Լ որոշման թիվ 1 հավելվածում՝

2.1. «*Ցանկություն ունեմ մասնակցելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթին:*» նախադասությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ՝ «□ *Հայտնում եմ, որ հանդիսանում եմ 02.09.2014 թվականին հայտարարված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցի ամփոփման արդյունքներով Հանձնաժողովի կողմից գնահատված թեկնածու և խնդրում եմ հիմք ընդունել նախկինում իմ ներկայացրած փաստաթղթերը*».

2.2. «□ *հայտարարություն անհատական տվյալներ ստանալու համաձայնության վերաբերյալ*» բառերից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ՝ «□ *դիմումը և կից փաստաթղթերն առձեռն հանձնելու՝ հասարակ գրավոր ձևի լիազորագիր (եթե դրանք հանձնում է այլ անձ)*»:

3. Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 2-Լ որոշման հավելվածում՝

3.1. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «*Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստերը վարում է տարիքով ավագ անդամը:*».

3.2. 2-րդ կետի 1-ին նախադասության «*նիստերի*» բառից հետո լրացնել «*հրավիրումը և*» բառերը,

3.3. 2-րդ կետից հետո լրացնել նոր 2^1.կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2^1. *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի ընթացքում հրապարակման ենթակա տեղեկություններն են.*

2^1.1. *հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, որոնք հրապարակվում են նիստին հաջորդող երեք օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքում տեղադրելու եղանակով.*

2^1.2. *յուրաքանչյուր օրվա ընթացքում ընդունված դիմումների մասին տեղեկատվությունը, որը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքում տեղադրելու եղանակով հրապարակվում է մեկօրյա ժամկետում*».

3.4. 4-րդ կետից հետո լրացնել նոր 4^1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4^1. *Հրամանագրի 15-րդ կետով նախատեսված գրանցամատյանում ենթակա են գրառման.*

4^1.1. *անձամբ ներկայացած հավակնորդի (լիազորված անձի միջոցով փաստաթղթեր ներկայանցնելու դեպքում նաև լիազորված անձի) կամ փոստով փաստաթղթերն ուղարկած անձի անուն, ազգանուն, հայրանունը.*

4^1.2. *փաստաթղթերը ստանալու օրը և ժամը.*

4^1.3. *նշումներ փաստաթղթերի լրիվության վերաբերյալ.*

4^1.4. *հավակնորդի կամ նրա լիազորված անձի ստորագրությունը, իսկ փոստով փաստաթղթերը ստանալու դեպքում՝ փոստային ծրարի ծածկագրի համարը:*»,

3.5. 10-րդ կետը շարադրել հետյալ խմբագրությամբ՝ «*Հարցազրույցին մասնակցում է անգլերենի և ֆրանսերենի երկուական մասնագետ: Հանձնաժողովը որոշում է կայացնում դիմել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին մրցույթին ներգրավելու համար անգլերենի և ֆրանսերենի երկուական մասնագետների թեկնածություններ ներկայացնելու նպատակով:*»

4. Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 3-Լ որոշման 14-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հանձնաժողովի նիստը վարող Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ